

Արձանագրություն N1
ԵԼՀ Ֆակուլտետի գիտխորհրդի

10.09.2019թ. նիստի

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ֆակուլտետի խորհրդի 2019- 2020 ուս տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչի՝ Բ.Գ.դ., դոցենտ Հ. Բաղդասարյանի տարեկան հաշվետվություն:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 29-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը շնորհավորեց գիտխորհրդի անդամներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ և մաղթեց արդյունավետ աշխատանք: Թարգմանության տեսության և պրակտիկայի, Ֆրանսիական բանասիրության և Իսպանական բանասիրության ամբիոնների վարիչները ներկայացրեցին անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց երկու կիսամյակով անվանական կրթաթոշակի ներկայացնել հետևյալ ուսանողներին՝ բաշխելով կրթաթոշակները երկու ուսանողների միջև ըստ առաջին ու երկրորդ կիսամյակի:

1. Աննա Նահապետյան /ֆրանս. լեզու և գրակ., բակալավր 4-րդ կուրս, ՄՈԳ-20/ - Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ:
2. Նանե Գրիգորյան /ֆրանս. լեզու և գրակ., մագիստրատուրա 2-րդ կուրս, ՄՈԳ 19,25/ - Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ:
3. Դանիելյան Ջուլիետա /թարգմ., 3-րդ կուրս, ՄՈԳ-20 / - Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ:
4. Վարդիկյան Մարիամ /թարգմ., 3-րդ կուրս, ՄՈԳ - 19,92/, Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ:
5. Խրոյան Աննա /իսպ. լեզու և գրակ., մագիստրատուրա 1 կուրս, ՄՈԳ-19,73- Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ:
6. Խաչատրյան Մերի / իսպ լեզու և գրակ., մագիստրատուրա 1 կուրս, ՄՈԳ-19,72- Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ

2. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի 2019- 2020 ուս. տարվա աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում հաստատել ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի 2019- 2020 ուս. տարվա աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ՝

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչի Բ.Գ.Պ., դոցենտ Հ. Բաղդասարյանի տարեկան 2018-2019 հաշվետվությունը:

Հ. Բաղդասարյանը կարևորեց բակալավրի նոր կրթական ծրագրի ստեղծումը, ինչպես նաև դասախոսների համար նախատեսված տարբեր սեմինարների ու դասախոսությունների կազմակերպումը: Ամբիոնի գործունեության առանցքային խնդիրներից է ուսումնական ձեռնարկների, մենագրությունների, հոդվածների հրատարակումը, որոնց ուղղությամբ տարվում են

աշխատանքներ: Ամբիոնը ընդլայնել է միջազգային համագործակցությունը: Ամբիոնում կազմակերպվել են նաև մի շարք մշակութային միջոցառումներ: Անհրաժեշտություն կա տեխնիկական արդի միջոցների համալրման՝ ուսուցումը է՛լ ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվետվությունը գնահատել դրական:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Դիմել ԵՊՀ ռեկտորատ՝ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնում բակալավրի ուսումնական ծրագրին կից երկու մասնագիտական ծրագրեր՝ «Զբոսավարական գործ (անգլերեն-հայերեն)» և «Վարչագործարարական թարգմանություն» ծրագրերի մշակման գործընթացի մեկնարկի իրավունք ստանալու խնդրանքով, ինչպես նաև վերոնշյալ ամբիոնում մագիստրատուրայի «Զբոսավարական գործ (անգլերեն-հայերեն)» ծրագրի մշակման գործընթացը սկսելու և արտոնման իրավունք ստանալու խնդրանքով:
- Հաստատել Հովհաննես Վանեսյանի «Լեզվական քաղաքավարությունը որպես խոսքարկային գործառույթի դրսևորում անգլերենում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ա. Չուբարյանին:

Գիտխորհրդի նախագահ և ղեկան, Բ.Գ.Թ., դոց.՝

Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար Բ.Գ.Թ., դոց.՝

Մ.Դավայան

10 .09. 2019 թ.